«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

2022

Թեման՝ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՇԵՐՏԱՎՈՐՎԱԾ և ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

/ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ/

Առարկա՝ Մայրենի, մաթեմատիկա

Հեղինակ՝ Համասփյուռ Պողոսյան

Դպրոց՝Նիգավանի միջնակարգ դպրոց

Ապարան 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....3

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ ---------- 4

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ----------9

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ ---------- 10

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 12

ԱՄՓՈՓՈՒՄ.....13

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....

.....14

ՀԱՎԵԼՎԱԾ.....15

ՆԱԽԱԲԱՆ

Եթե ուզում ես հասկանալ դու ինձ,
ներս մտիր անտառ ու ականջ դիր.
Որքա՛ն ձայներ կան, բոլորը տարբեր…
Պ. Սևակ

Յուրաքանչյուր ուսուցիչ դասարան մտնելուց առաջ անպայման իր առջև դնում է նպատակ՝ որն է կրթության նպատակը, ինչ պետք է սովորեցնի ինքն իր աշակերտներին և ինչպես:

Ահա այս հարցերի պատասխանների միջոցով է լուծվում կրթության բովանդակության յուրացման խնդիրները:

Դեռևս 1960-ական թ-ին հայտնաբերել են դպրոցականների մտավոր զարգացման ախտորոշման մի շարք մեթոդներ, որոնք կապված են այնպիսի ցուցանիշների հետ ինչպիսիք են՝

1. ուսումնական նյութի դասակարգումը
2. մտավոր գնործունեության հնարները և դրանց փոխանցման հնարավորությունը
3. գիտելիքներն ինքնուրույնաբար ձեռք բերելու կարողությունը
4. մտածողության տնտեսումը
5. մասնավորից դեպի ընդհանուր առաջ խաղացման տեմպը /արագություն/ գործողությունների ներքին պլանը

Այս աշխատանքին արդյունավետ լուծում տալու համար մեզ կօգնի ինտերակտիվ մեթոդների կիրառումը անհատական և շերտավորված ուսուցումը ժամանակ:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Երեխայի արդյունավետ ուսումնառությունը դպրոցում պայմանավորված չէ միայն ուսումնական գործունեության հաջող մեկնարկով: Դրան հասնելու քայլերը պետք է կատարվեն ավելի վաղ՝ մինչև դպրոց հաճախելը:

Անհրաժեշտ է հնարավորինս օգնել երեխային և ծնողին՝ այդ դժվարությունները սահուն, առանց հուզական լարվածության ու հոգեկան ապրումների հաղթահարելու համար: Այսինքն պետք է օգնել երեխային ճիշտ ապրել իր մանկությունը:

Բոլոր ժամանակների առաջադեմ մանկավարժները մեծ տեղ են հատկացնում երեխաների նկատմամբ անհատական մոտեցման հիմնահարցին: Յուրաքանչյուր երեխա յուրօրինակ աշխարհ է. նրան կարող է ճանաչել այն մեծահասակը, ով կարողանում է մանկան հետ կիսել նրա տխրությունը և անհաջողությունը, ուրախությունն ու հաջողությունը:

Բժիշկ և գրող Յանուշ Կորչակն ասել է.

«Չիջնել երեխայի մակարդակին, այլ բարձրանալ նրան հասկանալու աստիճանին: Երեխան միշտ պետք է զգա ուժեղ ձեռքերի ամրությունը, լսի իր մտերիմի սրտի բաբախյունը, որը միշտ կլինի իր կողքին, կօգնի, կբացատրի և կհասկանա իրեն»:

Նորություն չի մեզ համար, որ երեխաներին ուսումնասիրելը և հասկանալը նուրբ հոգեբանական գործիմացություն է, որին պետք է լավ տիրապետի յուրաքանչյուր մանկավարժ:

Ի՞նչ, ինչո՞ւ և ինչպիսի՞ ուղիներով է հնարավոր հասնել դաստիարակության գործընթացի առավել արդյունավետությանը:

Իմ բավականին երկար տարիների աշխատանքային փորձի ընթացքում, ինքս մի մեթոդ եմ կիրառել, որը իմ աշխատանքի համար շատ արդյունավետ է. այն է՝ որպես դասվար առաջին տարվա երկու ամիսների ընթացքում ամեն ինչ անում եմ, որ բոլոր երեխաները անխտիր ինձ անկեղծորեն շատ սիրեն, և դա շատ լավ ստացվում է: Եվ երբ արդեն իմ և աշակերտների մեջ կա փոխադարձ սեր, հարգանք, անկեղծություն, ազնվություն մեր աշխատանքը բավականին հեշտանում է: Քննադատելի են այն մանկավարժները, որոնք հաճախ անտեսում են երեխայի անձնավորությունը: Բոլոր երեխաների նկատմամբ չի կարելի կիրառել միանման մեթոդներ: Երեխաների ուսուցման և դաստիարակության գործում կարևոր է անհատական առանձնահատկություն ների հաշվառումը:

Ռուս մեծ ուսուցիչ Կ. Դ. Ուշինսկին մշակել է երեխաների նկատմամբ անհատական մոտեցման մեթոդական ծավալուն տեխնիկաներ: Նա նշել է, որ այդ բարդ գործընթացում չի կարելի երեխային տալ կոնկրետ հանձնարարություններ՝ ընդգծելով հարցի լուծման ստեղծագործական տարբերակը:

Ն. Կ. Կրուպսկայան երեխանրի նկատմամբ անհատական մոտեցման հարցում մեծ ուշադրություն է դարձրել այն հանգամանքին, որ կոլեկտիվ դաստիարակության ժամանայ ամբողջովին բացահայտվում է երեխայի անհատականությունն ու կարողությունները:

Ա. Ս. Մակարենկոն կարծում էր, որ երեխաների նկատմամբ անհատական մոտեցումը շատ կարևոր է մանկավարժական մի շարք խնդիրների լուծման, օրինակ մանկական կոլեկտիվի ստեղծման, և խաղի մեջ երեխաների աշխատանքային դաստիարակության համար:

Դաստիարակությունը մշտապես գործ ունի կոնկրետ զարգացող անձնավորության հետ, որն օժտված է անհատական-հոգեբանական մի շարք առանձնահատկություններով:

Դաստիրարակչական արդյունքը էապես պայմանավորված է այն հանգամանքով, թե որքան է հաջողվել մանկավարժին՝ պարզել երեխայի անհատականության բնույթը, որքանով է նա ճիշտ որոշել անհատական առանձնահատկությունների ակունքը: Ուսուցիչը որքան լավ է ծանոթ երեխաների առանձնահատկություններին այնքան ավելի ճիշտ կարող է կազմակերպել ուսումնադաստիարակչական գործընթացը և ընտրել սովորողների անհատականություններին համապատասխան մեթոդներ: Իր նպատակին կարող է ծառայել այն ուսուցչի աշխատանքը, «ով գիտե՝ որ դեպքում ինչն է հարմար»,- գրում է Ղ. Աղայանը:

Անհատական մոտեցումն առաջին հերթին ենթադրում է ճանաչել, հասկանալ և ընդունել երեխային:

-Ճանաչել երեխային նշանակում է ընդունել նրա անհատականությունը, հայացքները, դիրքորոշումները, նույնիսկ սխալները: Հմուտ մանկավարժները միշտ էլ հարգել են երեխային՝ հաշվի նստելով նրա ազատության և իրավիճակների հետ:

-Հասկանալ երեխային նշանակում է թափանցել նրա ներաշխարհը, ինչը հնարավոր է դարձնում միայն զգացմունքների և տրամաբանության ներդաշնակ զուգորդումը: Ըստ Ռոջերսի՝ մանկավարժին անհրաժեշտ է երկու հիմնական հատկություն՝

1.Կոնգրուենտություն՝ անկեղծություն հարաբերությունների մեջ:

2.Ապրումակցում՝ ուրիշին հասկանալու, ապրումակցելու կարողություն:

-Ընդունել երեխային նշանակում է առանց որևէ նախապայմանի դրական վերաբերմունք դրսևորել երեխայնի հանդեպ:

Անհատակ կողմնորոշիչ ուսուցման ընթացքում էական փոփոխության են ենթարկվում ուսուցիչ-երեխա հարաբերությունները: Ավանդական ուսուցման պարագայում երեխան դիտարկվում է որպես օբյեկտ: Նրան պետք է ուսուցանել ինչպես մի անոթ, որի մեջ ուսուցիչը գիտելիքներ է լցնում: Մինչդեռ ուսուցման

ընթացքում անհատական մոտեցում դրսևորելու պարագայում նա դիտվում է որպես սուբյեկտ՝ ուսուցչի գործընկեր, որը սեփական կարծիքի, սխալների, բանավիճելու և այլ իրավունքներ ունի:

Իրագործելով անհատական մոտեցում ուսուցիչը պետք է հիշի, որ երեխայի վրա տարբեր ձևով են ազդում խրախուսանքները: Մեկին պետք է գովել, որովհետև դա ամրացնում է նրա հավատն իր ուժերի նկատմամբ, մյուսի նկատմամբ չպետք է շռայլել գովեստներ, որպեսզի նա չմղվի ինքնագնահատականի բարձրացման և սնամեջ ինքնաբավարարման:

Անհատական մոտեցումն արտահայտվում է նաև պատժի չափի գործադրման դեպքում:

Երեխաների անհատական առանձնահատկությունների ուսումնասիրությունը մանկավարժից պահանջում է բավականին ժամանակ և հետազոտական հետևողական աշխատանք: Այդ նպատակով ուսուցիչը պետք է վարի օրագիր, որտեղ անհրաժեշտ է լրացնել սովորողների վարքի առանձնահատկությունները և ժամանակ առ ժամանակ ընդհանրացնել հետազոտությունների արդյունքները:

Հատուկ ուշադրություն են պահանջում ամաչկոտ, կաշկանդված, անհամարձակ երեխաները: Միաժամանակ ուսուցչի կողմից չպետք է անուշադրության մատնվեն ակտիվ, կազմակերպչական բարձր կարողություններով երեխաները:

Շերտավորված ուսուցումն ուսումնադաստիարակչական ճկուն գործընթաց է, որը բնութագրվում է սովորողների անհատական ընդունակությունների հաշվառմամբ: Ուսումնական նյութը մշակում է դարձնում մատչելի յուրաքանչյուր աշակերտի համար:

Շերտավորված ուսուցման հիմքում ընկած է անհատական ուսուցման գաղափարը: Այն պահանջում է ուշադիր լինել ոչ միայն այն աշակերտների նկատմամբ, ովքեր ուսման մեջ հետ են մնում այլև նրանց, ովքեր աչքի են ընկնում մտավոր զարգացման բարձր մակարդակով, այս կամ այնուսումնական առարկայի նկատմամբ ցուցաբերում են խոր հետաքրքրություններ և ընդունակություններ:

Շերտավորված ուսուցումը խնդիր է դնում՝ առաջին, հայտնաբերել այն պայմանները, որոնք կարող են ապահովել բոլոր աշակերտների մտավոր ընդունակությունների առավելագույն և համակողմանի զարգացմանը, և երկրորդ՝ այն պայմանները, որոնք կարող են ապահովել աշակերտների բնական հետագա զարգացումը:

Նշված խնդիրները կարելի է լուծել թեքումով դպրոցների, ֆակուլտատիվ պարապմունքների, արտադասարանային առարկայական խմբակների, դպրոցական գիտական ընկերությունների, խորացված դպրոցների, խորացված դասարանների միջոցով:

Շերտավորված ուսուցում ասելով չպետք է հասկանալ միայն այն առարկաների խոր ու բազմակողմանի ուսումնասիրությունը որոնց ուղղությամբ կազմակերպվում է ուսուցում:
Ընդհակառակը, ուսուցման այդ ձևը խնդիր է դնում ուսումնական ծրագրերի սահմաններում սովորողներին յուրացնել տալ գիտելիքների նվազագույնը և ապա դրանից դուրս ավելի հիմնավոր և ավելի խոր ուսումնասիրել տալ այն աառարկաները, որոնց նկատմամբ նրանք դրսևորում են հակումներ, հետաքրքրություններ և մտավոր ընդունակություններ: Չի բացառվում, որ աշակերտները ուսումնասիրեն նաև այնպիսի առարկաներ, որոնք չեն մտնում ուսումնական պլանի մեջ:

Այսպես, օրինակ, արտասահմանյան թեքումով դպրոցներում աշակերտները խորացված ուսումնասիրում են անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, պարսկերեն և այլ լեզուներ: Թեքումով դպրոցը կոչվում է տվյալ առարկայի անունով: Օրինակ ՝ անգլերենի թեքումով, ֆրանսերենի թեքումով և այլն:
Մաթեմատիկայի, ֆիզիկայի թեքումով դպրոցում սովորողները խորացված ուսումնասիրում են այդ առարկաները, ձեռք բերում համապատասխան գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ:
Խորացված դպրոցներում աշակերտները խորացված ուսումնասիրում են մեկ, երկու առարկա: Օրինակ՝ հայոց լեզու-գրականություն կամ կենսաբանություն և քիմիա և այլն:
Խորացված դասարանում /տվյալ դպրոցի/ աշակերտները բազմակողմանիորեն ուսումնասիրում են որևէ առարկա:
Ֆակուլտատիվներում, արտադասարանային խմբակներում աշակերտները խորացված ուսումնասիրում են այս կամ այն առարկան, ինչպես նաև գիտությունների այլ բնագավառներ:
Մանկավարժական վարպետություն ունեցող ուսուցիչները շերտավորված ուսուցումը իրականացնում են նաև տվյալ դասի ընթացքում, իհարկե նախապես իմանավոլ դասարանի յուրաքանչյուր աշակերտի հետաքրքրությունները, ընդունակությունները: Շերտավորում են նրանց տրվող առաջադրանքները: Օրինակ՝ մաթեմատիկայի ուսուցիչը ստուգողական գրավոր անցկացնելու նպատակով կազմում է չորս տեսակի վարժություններ կամ խնդիրներ՝ թույլ, միջակ, լավ և գերազանց սովորողների համար ու հայտնում թե ովքեր որ տարբերակն են լուծելու:
Շերտավորված ուսուցման փորձը և այդ ուղղությամբ կատարված հետազոտությունների արդյունքները հաստատել են, որ որևէ առարկայի խորը ուսումնասիրությունը աշակերտների գիտելիքները հարստացնում է ոչ միայն տվյալ և հարակից առարկաներից, այլև մյուս առարկաներից ու զգալիորեն բարձրացնում է ուսման առաջադիմությունն ընդհանրապես: Ուսումնական գործունեությունը նրանց համար դառնում է ամենօրյա պարտադիր հոգս: Նրանք կարդում են լրացուցիչ

գրականություն, աշխատում են սկզբնաղբյուրների վրա, հավաքում են նոր փաստեր ու տվյալներ, ձգտում են ձեռք բերված գիտելիքները վերածել համոզմունքների, մշակում են իրենց հայացքները, ձևավորում գիտական աշխարհայացք:

Ռուս գիտնականները Մ. Ա. Մելնիկովի , Դ. Ա. Էպշտեյնի և ուրիշների հետազոտությունները հաստատել են, որ շերտավորված ուսուցման միջոցով կարելի է պարտադիր ծավալով գիտելիքներ տալ բոլոր սովորողներին ու միաժամանակ ընդլայնել ու խորացնել նրանց գիտելիքները գիտության, տեխնիկայի և արվեստի՝ նրանց ընտրած մարզերից: Նշանակում է շերտավորված ուսուցումը սովորողների մեջ նոր հետաքրքրություններ , նոր նախասիրություններ խթանելու միջոց է: Շերտավորված ուսուցման որոշ տարրեր կարելի է իրականացնել նաև բուհերի ամբիոններին կից խմբակներում, ինչպես նաև պատանի բանասերների, պատանի տեխնիկաների խմբակներում:

Շերտավորված ուսուցումը հետապնդում է երկու գլխավոր նպատակ. առաջին՝ առավել թափով զարգացնել սովորողների այս կամ այն առարկայի գծով ցուցաբերված հակումներն ու ընդունակությունները, երկրորդ՝ ի հայտ բերել աշակերտների՝ իրենց գործունեության տարբեր տեսակների նկատմամբ ունեցած ընդունակությունների կառուցվածքային բաղադրամասերը և դրանց հիման վրա օգնել նրանց ապագա մասնագիտության ընտրության գործում:

Վերը շարադրվածներից պարզվեց, որ շերտավորված կամ տարբերակված ուսուցումը հենվում է սովորողների մտավոր ընդունակությունների հիման վրա:Ուստի ասենք, թե ինչ է ընդունակությունը:

Ընդունակությունը մարդու անհատական հոգեբանական առանձնահատկությունների այն համալիրն է /կոմպլեքսը/, որը բավարարում է տվյալ գործունեության պահանջներին և հանդիսանում է նրա հաջող կատարմն պայմանը: Կարելի է ընդունակույունները մասնատել /այս կամ այն առարկաներից/ ցույց տալ նրա հիմնական տարրերը: Այսպես, հոգեբան Վ. Ա. Կրուտեցկին մաթեմատիկական գործունեության գործընթացում առանձնացնում է աշակերտների մտածողական ընդունակությունների հետևյալ տարրերը.

1.պարզ ընկալում
2.արագ և լայն ընդհանրացում
3.սեղմ մտահանգելու կարողություն
4.մտածական գործընթացների շարժունություն
5.խնդիրների լուծման ժամանակ մտածողության տնտեսում:

Վ. Պ. Յագունկովան ելնելով իր հետազոտությունների արդյունքներից սովորողների գրական ընդունակությունների կառուցվածքում առանձնացնում է հետևյալ տարրերը.

1.բանաստեղծական ընկալում
2.պատկերային հիշողություն
3.գեղագիտական զգացում

4.պատկերավոր մտածողություն
5.ստեղծագործական երևակայություն
6.ճիշտ և արտահայտիչ գրական լեզվի տիրապետման ընդունակություն
Այսպիսով, կարելի է ասել՝ շերտավորված ուսուցումը նաև սովորողների մտավոր ընդունակությունների կառուցվածքային տարրերը հայտնաբերելու և զարգացնելու կարևոր միջոց է:

Հետազոտական աշխատանքի նպատակը- ժամանակակից մեթոդներից՝ ինտերակտիվ մեթոդների արդյունավետությունը «անհատական և շերտավորված ուսուցման ժամանակ»:

Հետազոտական աշխատանքի խնդիրները – ուղիներ փնտրել սովորողների ինքնուրույն ուսումնական գործունեությունը կազմակերպելու, գիտելիքների ձեռքբերման ընթացքում, նրանց անմիջական մասնակցությունը ապահովվելու:

Հետազոտության ենթական առարկան- խորապես ուսումնասիրել սեվերոողների անհատական առանձնահատկությունները, ուշադրություն դարձնել շերտավորված ուսուցման ուսումնադաստիարակչական ճկուն գործընթացին: Ուսումնական նյութը մշակել և դարձնել մատչելի յուրաքանչյուր աշակերտի համար:

Հետազոտության օբյեկտը- հետազոտությունը կատարվելու է դասի ընթացքում սովորողների ակտիվ մասնակցությամբ:

Հետազոտման մեթոդներ- հետազոտումը կատարվելու է ուսուցման ժամանակակից մեթոդներով: Այն է՝ ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդներ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Որպես հետազոտական աշխատանք լսարանը ընտրված է երկրորդ դասարանը որտեղ աշակերտների թիվը տասն էր ՝ վեց տղա, չորս աղջիկ: Անցկացրեցի երկու հետազոտական դաս: Ընտրված դասարանը ինքնանպատակ չէր, այստեղ սովորող ածակերտները եռամակարդակ են: Ծանոթ ենք սովորողների անհատական կարողություններին և հմտություններին: Այդ իսկ առումով նպատակային կլիներ ինտերակտիվ մեթոդների կիրառումը իր ամբողջ բազմազանությամբ:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ

Հետազոտությունը իրականացվեց ըստ պլանավորման երկրորդ դասարանում՝ երկու դասաժամով, որոնք կազմված պլանի համաձայն անցկացվեծ երկրորդ դասարանում ըստ պահանջվող նյութատեխնիկական բազայի:

Դաս 1. «Մայրենի» հաշվի առնելով ինտերակտիվ մեթոդների կիրառումը շերտավորված և անհատական ուսուցման գործընթացում, դասի սկզբնական հատվածի մշտական գործընթացից հետո ներկայացվեծ աշխատանքի բուն բովանդակությունը: Սովորողները բաժանվեցին խմբերի, ըստ մակարդակների համապատասխան անվանումներով /1-ին մակարդակ – գարուն, 2-րդ մակարդակ – ամառ, 3-րդ մակարդակ աշուն/, որոնցից յուրաքանչյուրին տրվեց հարցաթերթիկ: Մինչև հարցերին պատասխանելը խթանման փուլում կիրառեցի «մտքերի տարափ»՝

1.Տարին քանի եղանակ ունի:
2.Թվարկենք տարվա եղանակների:
3.Բնութագրենք տարվա եղանակները:
4.Մանրակրկիտ ներկայացնենք տարվա եղանակներից «աշունը»:
5.Ուշադրություն դարձնել տերևների փոփոխության վրա:

Մտքերը գրառվեծ գրատախտակին T-ձև աղյուսակի ձևով:

Գիտեի	Սովորեցի
Որ տարին ունի չորս եղանակ:	Որ յուրաքանչյուրը կազմված է երեք ամսից:
Որ գարունը տաք է:	Որ գարնանը բնությունը զարթնուն է և սկսվում է նոր կյանք:
Ամառը շոգ է:	Ամռանը ջնավորվում և հասունանում են պտուղները:
Աշունը զով է:	Աշնանը հավաքում են անուշահամ բերք ու բարիքը:
Ձմեռը ցուրտ է:	Իսկ ձմռանը բնությունը հանգստանում է:
Որ աշնանը տերևները դեղնում են:	Տերևները տխրում են:

Այնուհետև վերլուծեցինք գրածը, և լրացրեցինք բացթողումները: Անցնելով իմաստի ընկալման փուլին յուրաքանչյուր խմբին տրվեծ համապատասխան առաջադրանքը:
1-ին խումբ /գարուն/ նկարագրել տերևաթափը:
2-րդ խումբ /ամառ/ ինչ եք կարծում տերևներն ինչու են տխուր երգեր երգում:
3-րդ խումբ /աշուն/ հորինել երկխոսություն գարնան և աշնան տերևների միջև:
Տրվեց տաս թոպե ժամանակ աշխատելու համար: Աշխատանքի ընթացքում ցածրաձայն լսում ենք Հովի. Թումանյանի «Աշուն» երգը, որն ավելի պատկերվոր է դարձնում հանձնարարված թեման: Այնուհետև լսեցինք խմբերից յուրաքանչյուրին: Կատարվեցին լրացումներ: Տեղի ունեցավ մտքերի փոխանակում: Ամբողջ ընթացքում սովորողները աշխատում էին ինքնուրույն, բավականին համարձակ ներկայացնում էին իրենց մտքերը: Թերի մտքերը ուղվում կամ լրացվում էին մյուս սովորողների կողմից: Բոլորի մոտ գրեթե հաջողվեց այս աշխատանքը: Դասի ավարտին գնահատվեց յուրաքանչյուր աշակերտ ըստ իր ակտիվության և պատասխանի: Մեր դասը հասավ իր նպատակին: Որովհետև սովորողները աշխատում էին հիմանակնու ինքնուրույն:
1-ին խմբի սովորողները կարողացան նկարագրել տերևաթափը:
2-չդ խմբի սովորողները կարողացան բացատրել թե ինչու են տարևները տխուր երգեր երգում:
3-րդ խմբի սովորողները կարողացան գեղեցի երկխոսություն հորինել գարնան և աշնան տերևների միջև:

Տնային առաջադրանք՝ մատակա այգուց և բանջարանոցից հավաքել տարբեր տերևներ և չորացնել տեխնոլոգիայի դասաժամին հետաքրքիր աշխատանքներ կատարելու համար:
Արտահայտիչ կարդալ բանաստեղծությունը և պատասխանել հարցերին:

Դաս 2. «Մաթեմատիկա»
Առարկայի առանձնահատկությունները հաշվի առնելով դասի սկզբնական հատվածի մշտական գործընթացից հետո կիրառեցի «մտագրոհ» մեթոդը: Որի ժամանակ սովորողները արագ-արագ գումարի և տարբերության արտահայտություններ կազմեցին, որը գրվեց գրատախտակին: Ստուգելուց և ճշգրտումներ անելուց հետո խթանման ժամանակ սովորողները բաժանվեցին երեք խմբի /եռամակարդակ/: Յուրաքանչյուր խմբին տրվեց իրենց հանձնարարությունը: Այն է՝
1-ին մակարդակ
1.Հաշվի՛ր արտահայտությունների արժեքները

20 + 4	60 + 9	38 – 8	91 – 1
4 + 20	9 + 60	38 – 30	91 – 90
24 – 4	69 – 9	30 + 8	90 + 1
24 – 20	69 – 60	8 + 30	1 + 90

2.Խնդիր
Լրացրո՛ւ բաց թողած տվյալները: Լրացրո՛ւ խնդրի հարցը:
Կար - *մարդ
Իջավ -*մարդ
Բարձրացան -*մարդ
……?մարդ
37 – 7 + 9 = 39 /մարդ/
Պատ.՝ ավտոբուսում եղան 39մարդ:
2-րդ մակարդակ
1. Հաշվի՛ր արտահայտության արժեքը և կազմի՛ր հակադարձ արտահայտությունները՝
20 – 4 60 + 9 38 – 8 91 – 1
2.Համառոտագրի՛ր խնդիրը, լրացրո՛ւ բաց թողած տվյալները և գտի՛ր պատասխանը՝
Ավտոբուսում կար 37մարդ: Առաջին կանգառում իջավ 7 մարդ և բարձրացավ 9 մարդ: Քանի՞ մարդ եղավ ավտոբուսում:
37 - .. + 9 =
Պատ.՝..... Մարդ
3-րդ մակարդակ
1.Լրացրո՛ւ բաց թողած տվյալները.

20 + 4 =*	60 + 9 =*	38 – 8 =*	91 – 1=*
4 + * =24	9 + * = 69	38 – *=8	91 – *=1
* – 4 =20	* – 9 =60	* + 8=38	* + 1=91
24 – *=4	69 – *=9	8 + * =38	1 + *=91

2. Համառոտագրիր խնդի՛րը և լուծի՛ր.
Ավտոբուսում կար 37մարդ: Առաջին կանգառում իջավ 7 մարդ և բարձրացավ՝ 9 մարդ: Քանի՞ մարդ եղավ ավտոբուսում:
Սովորողների տրվեց 10րոպե ժամանակ: Իմաստի ընկալման փուլում արդեն յուրաքանչյուր խումբ ներկայացրեց իր աշխատանքը կատարվեց լրացումներ և շտկումներ: Իհարկե ունենալով նախնական գիտելիքներ, հմտություններ և կարողություններ: Սովորողները գնահատվեցին ըստ իրենց ակտիվության և պատասխանի: Կշռադատման փուլուն հանձնարարվեց նմանատիպ վարժություններ և խնդիրներ կազմել հաջորդ օրը միմյանց ներկայացնելու համար: Ներ դասը հասավ իր նպատակին, որովհետև սովորողները ունենալով նախնական գիտելիքներ աշխատում էին ինքնուրույն և փոխհամաձայնեցված:Մենք հասանք մեր առջև դրված նպատակին՝

- Կարողացան հաշվել արտահայտություն արժեքը:

- Կարողացան կազմել հակադարձ արտահայտություն:
- Սովորեցին լրացնել խնդրի մեջ եղած բացթողումները:
- Հմտացան խնդիրը համառոտագրելու մեջ:
- Սովորողները գործում էին ինքնուրույն և ինքնավստահ:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցում այս թեմաների ուսուցման և մատուցման համար առաջարկվող մեթոդիկան պետք է համապատասխանի ժամանակակից պահանջներին, լինի բազմաբովանդակ ու հետաքրքրություն առաջացնի որպեսզի կարևորությունը ավելի ցայտուն լինի: Ընդհանուր նյութի բովանդակայնի առանձնահատկություններից ելնելով կարելի է հանգել այն եզրակացության , որ ավանդական մոդելի դասապրոցեսով հնարավոր չէ հանգել ցանկալի արդյունքի: Այդ իսկ պատճառով առաջարկվող ժամանակակից մեթոդները պետք է լայն կիրառելի լինեն ու նպատակաուղղված սեղմ ժամանակահատվածում թեման յուրացնելուն:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այս ամբողջ ընթացքում եկանք այն եզրահանգման որ ուսումնական գործընթացում շերտավորված և անհատական ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար պետք է առաջնորդվել ժամանակակից ինտերակտիվ մեթոդներով, նպաստելով սովորողի սեղմ ժամանակահատվածում գիտելիքների , հմտությունների և կարողությունների ամրապնդմանը:

Ուսումնական գործընթացի ընթացքում եկանք այն եզրահանգման, որ պետք է ընդգրկել առավել ընդարձակ մեթոդներ ֆորմալ կրթական ձևաչափեր, որոնք առավել արդյունավետ հետևանքներ կունենան:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Գ. Կովալյով, «Անհատի հոգեբանություն» Երևան 1970թ,
2. Ա. Ս. Մակարենկո, «Դաստիարակություն երեխաների դաստիարակության մասին» 1984թ.
3.«Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես, Երևան 2012թ.
4. Վ. Ա. Կրուտեցկին, «Մանկավարժական հիմունքներ» Երևան 1976թ.
5. Յ. Ա. Ամիրջանյան, «Մանկավարժություն» Երևան 2005թ.